դեան վանական ուսումնարանին Սաղիանու. զՅիսուսաւանդն նուիրեմք զողջոյն և զԱստուածային բազմապատիկ օրհնութիւն։

Ի յայտարար գրութենէ գերապատիւ Առաջնորդի թեմին Հայոց Շամախւոյ տեղեկացաք, զի յարգութիւն ձեր ընտրեալ էք ի պաշտօն հոգաբարձութեան Բուդաղեան վանական ուսումնարանի Հայոց վանիցն սրբոյն Ստեփաննոսի որ ի Սաղիան, վասն որոյ և մեք՝ մերով այսու Հայրապետական կոնդակաւ. հաստատեմք զ յարգութիւնս ձեր ի նմին հոգաբարձական պաշտաման, մեծայոյս զոլով՝ զի դուք ի սէր ազգի և հայրենի եկեղեցւոյ մերոյ՝ փոյթ մեծ ունիցիք ամենայն կարգապահութեամբ յառաջ վարել զհոգաբարձական ձեր պաշտօն, բարձրացուցանելով զբարոյական և զնիւթական զրութիւն ձեզ յանձնեալ ուսումնարանին ի կէտ նպատակի իւրոյ և յառաջադէմս զարգացուցանել զաշակերտեալսն ի դմին՝ զմանկունս ազգիս ի պէս պէս շնորհս, միտ դնելով մանաւանդ՝ կրօնական և բարոյական դաստիարակութեան նոցին, որով և արդարացուցեալ զբարի վարկումն զձէնջ՝ ընտրողացն զձեզ բարեպաշտօն հայ ժողովրդոյ՝ արժանի լինիջիք Աստուածային օրհնութեանց և բիւրապատիկ վարձատրութեանց՝ յաստիս և ի հանդերձելումն։

,, Եւ մեք օրհնելով զձեզ, զուսուցիչս և զաշակերտեալսն վանական ուսումնարանի վանիցդ, աղաչեմք զՏոգին սուրբ Աստուած, զի զօրացուսցէ զձեզ յաստպարիզի ազգօգուտ գործունէութեանց ի նորոգ ստանձնեալ պաշտաման ձերում, յաջողեալ ուղղեսցէ զամենայն զձեռնարկս ձեր ի բարիս և առատապէս հեղցէ զշնորհս իմաստութեան իւրոյ ի սիրտս և ի հոգիս սանուց ձեզ յանձնեղեալ ուսումնարանին, որոյ վասն կամ և մնամ միշտ

Ամենաջերմեռանդն աղօթարար,
ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հմ. 34
ի 17 յունվ. 1889 ամի Փրկչական
Եւ ի թուականութեան մերում ԹՑԼԸ
Ի Ս- Էջմիածին